«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլհասցե՝ www.ysu.am, board@ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2024 թ. օգոստոսի 19-ին տեղի ունեցած թիվ 2 հարցման կարգով նիստի

ՀՀ, ք. Երևան
19.08.2024 թ.

2024 թվականի օգոստոսի 19-ին տեղի է ունեցել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հարցման կարգով 1-ին նիստը: Քվեարկությանը մասնակցել են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ ՀՀ վարչապետի կողմից 2021 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1222-Ա որոշմամբ հաստատված հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 20 անդամներից 14-ը (քվեաթերթիկները կցվում են):

Ներկայացված օրակարգը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների մի մասի վարձակալության տրամադրման վերաբերյալ առաջարկության ընդունում և հայտի ներկայացում ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե:
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն» և «Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները միաձուլման եղանակով վերակազմակերպման հաստատում:
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 10_Լ որոշման հավելվածի 43-րդ կետում փոփոխությունների հաստատում:
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 9_Լ որոշման հավելվածում փոփոխությունների հաստատում:
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 11_Լ որոշման հավելվածում փոփոխությունների հաստատում:
6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2023 թվականի գործունեության հաշվետվության հաստատում և անկախ աուդիտորի եզրակացությունն ի գիտություն ընդունում:

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների մի մասի վարձակալության տրամադրման վերաբերյալ

առաջարկության ընդունում և հայտի ներկայացում ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե:

Առցանց եղանակով 1-ին հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2020 թվականի թիվ 914-Ն որոշմամբ հաստատված պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման կարգի 4-րդ կետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 23-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների մի մասի վարձակալության տրամադրման վերաբերյալ առաջարկությունը և հայտ ներկայացնել ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն» և «Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները միաձուլման եղանակով վերակազմակերպման հաստատում:

Առցանց եղանակով 2-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի և Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի միաձուլման եղանակով վերակազմակերպման վերաբերյալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2024թ. ապրիլի 3-ի թիվ 15/2 որոշմամբ ընդունված առաջարկությունը՝ համաձայն հավելվածի:
2. Վերակազմակերպված ամբիոնն անվանակոչել ԵՊՀ ընդհանուր աշխարհագրության ամբիոն:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 10_L որոշման հավելվածի 43-րդ կետում փոփոխությունների հաստատում:

Առցանց եղանակով 3-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է

Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 10_Լ որոշման հավելվածի 43-րդ կետի 4-րդ և 6-րդ ենթակետերի փոփոխությունը. 4-րդ և 6-րդ կետերը խմբագրել 4-րդ կետում. Ընդհանուր աշխարհագրության ամբիոն:

4. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 9_Լ որոշման հավելվածում փոխությունների հաստատում**:

Առցանց եղանակով 4-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 7-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ***որոշում է***.

Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 9_Լ որոշման փոփոխությունները:

5. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 11_Լ որոշման հավելվածում փոփոխությունների հաստատում**:

Առցանց եղանակով 5-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 8-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ***որոշում է***.

Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 11_Լ որոշման հավելվածում փոփոխությունները:

6. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2023 թվականի գործունեության հաշվետվության հաստատում և անկախ աուդիտորի եզրակացությունը ի գիտություն ընդունում**:

Առցանց եղանակով 6-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 8-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ***որոշում է***.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2023 թվականի ֆինանսական և գործունեության տարեկան հաշվետվությունները ՝ համաձայն հավելվածի:
2. ընդունել ի գիտություն անկախ աուդիտորի եզրակացությունը՝ համաձայն հավելվածի:

Խորհրդի նախագահ՝ **Ս. Պապիկյան**

Խորհրդի քարտուղար՝ **Ե. Կիրակոսյան**